

3. Առաւելագոյն երջանկութեան սկզբունքը.-

Օգտապաշտութեան նպատակը՝ *առաւելագոյն երջանկութիւն*ն է: Երջանկութիւն մը, որ կը շեշտէ մարդու բարօրութիւնը եւ այստեղ անպայման նկատի կ'առնէ երջանկութեան «առաւելագոյնի» հանգամանքը: Այս իմաստով օգտապաշտութիւնը բացայայտօրէն *երջանկապաշտական* (Eudaimonism) երանգ ունի: Ե. Բենթամ, ինչպէս տեսանք, իր այս գաղափարը կը կոչէր՝ «առաւելագոյն երջանկութեան սկզբունք» („Maximum-Happiness-Principle“): Իսկ *երջանկութիւն*⁽⁶⁸⁾ (Happiness) հասկացութեան մասին արտայայտուած գանազան կարծիքները նշուած են Մաս – 9ի «Բարոյագիտութեան Հիմնական Հասկացութիւններուն» մէջ:

4. Ընդհանրականացման սկզբունքը.-

Օգտապաշտութեան գլխաւոր նպատակներէն կը նկատուի նաեւ՝ *օգուտի ընդհանրականացումը*: Օգուտի ընդհանրականացում մը, որ բոլորովին կը հեռանայ *եսասիրութենէն*⁽⁶⁹⁾ (Egoism) եւ յստակօրէն կը թեքի դէպի՝ *այլասիրութիւն* (Altruism) եւ ընդհանուր ընկերային բարօրութիւն: Այստեղ նաեւ կը շեշտուին օգուտի «առաւելագոյնի» հանգամանքը եւ ընկերութեան մէջ բաշխումի *հաւասարութեան*⁽⁷⁰⁾ ու *արդարութեան*⁽⁷¹⁾ սկզբունքները:

Օգտապաշտութեան վերոյիշեալ հիմնական չորս սկզբունքները կարելի է նաեւ, հետեւելով Կանտի *անպայմանական հրամայականին*, «օգտապաշտական հրամայական»ի (Utilitarian Imperative) մը ձեւով ներկայացնել.-

«Վարուէ՛ այնպէս, որ վարմունքիդ հետեւանքը *առաւելագոյն օգուտը ապահովէ՛ ինչորոյ առարկայ բոլոր մարդոց համար*»:

➤ ՕԳՏԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԱՅՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Ժամանակի ընթացքին, մանաւանդ 20-րդ դարէն սկսեալ, գրեթէ բոլոր բարոյագետները հեռացան **Ե. Բենթամի** եւ **Ջ. Ս. Միլի** դասական օգտապաշտութենէն եւ մշակեցին արդի օգտապաշտութեան գանազան տեսութիւններ: Արդարեւ, յառաջացած նոր հոսանքները փոփոխութեան ենթարկեցին գլխաւորաբար *օգուտի* սկզբունքը:

Ստորեւ, առանց յաւելեալ մանրամասնութեան, պիտի նշուին այդ տարբերակներէն երեքը.-

(68) **Երջանկութիւն** (Happiness) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, Էջ 451:

(69) **Եսասիրութիւն** (Egoism) եւ **այլասիրութիւն** (Altruism) հասկացութիւններու մասին տե՛ս Մաս – 9, Էջ 443:

(70) **Հաւասարութիւն** (Equality) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, Էջ 491:

(71) **Արդարութիւն** (Justice) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, Էջ 401: